

## ԵՈՐՀՐԳԱՄՈՒԹՅՈՒՆ ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱ

Երկու հանգամանք մարդոց շոշափելի սխալանքի մեջ են ձգում. մեկ, երբ պատճառներ են վերագրում այնպիսի հանգամանքների, որոնք պատահած չեն. երկրորդ, երբ մի գործի օգտավետ նպատակը չորոշած, նրա գործադրության կերպերի վերա են խոսում:

### ՆՊԱՏԱԿ ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ

#### Ա

Ուսուցանել կնշանակե սովորեցնել մի բան, իսկ կրթել կնշանակե վարժել մի բանի մեջ կամ աճեցնել, զարգացնել այն գորությունը, ընդունակությունը, որ արդեն կա անհատի մեջ: Այն արհեստը, որ կայանում է այդ երկու պաշտոնի ի միասին կատարելումը, ասվում է դաստիարակություն:

Մեծ է դաստիարակի գործը, և սրբազան է նորա պաշտոնը, վասն զի ով որ բանական արարածին ձեռք է առնում, նորան կատարելագործելու մտոք, նախ և առաջ հարկավոր է իմանալ, թե «ի՞նչ է նա, ինչպիսի՞ ինչ է, և ինչո՞ւ համար է»:

Մարդը, որ գիտե քննել երկինքը և երկիրը, ծով ու ցամաքը, ո՛չ մի հարց լուծելու համար այնքան չէ դժվարանում, որքան յուր անձին վերաբերյալ հարցին մեջ, թե ի՞նչ է ինքը, ի՞նչ է յուր գոյության նպատակը և ի՞նչ կարող է

լինել: Արդարև, մի անքննելի արարած է մարդը և մտքի կարողութեան սահմանից բարձր, բայց անշափ անքննելի է որչափ մի միջատը և մի հատիկ ավաղը բնութեան մեջ. պատճառ՝ ո՞վ իմացավ և զոցա բուն սկիզբն և վախճանը... Բայց որ այս վերջինների նշանակութիւնը ավելի հեշտութեամբ է լուծում, քան թե յուր, դրա պատճառը ոչ այլ ինչ է. բայց միայն յուր կուրորեն ինքնասիրութիւնը, որ թույլ չէ տալիս յուր նշանակութիւնը նույն շափով վճռած տեսնել: Ինչո՞ւ հանգամանքը դաստիարակութեան մեջ մեծամեծ խռովութիւններ է հարուցանում և դաստիարակներին երկու մասի բաժանում. մեկ մասը քարշում է այս կողմ, մյուսը՝ այն. մեկը՝ առաջ, մյուսը՝ հետ. բայց իսկապես երկոցունց ընթացքն ևս չէ ուղիղ և չէ հարմարցուցած բնականին:

Մարդը, ըստ ներքնույն, զանազանվում է անասունից յուր անմահ հոգվովը և բանականութեամբը: Բանականութեան սկզբնապատճառը նորա միտքն է, որ է հավաքումն տպավորութեանց հարտաբուստ ի ձևոն ներքին և արտաքին զգայարանաց, իսկ հոգին մարմնո կենդանութիւնն է և նորա սկիզբն ու վախճանը. որ ծագում է աստծուց և դառնում դարձյալ դեպի նա: Ասել է, թե մարդը ունի մարմին, հոգի և միտք և դոքա երեքը ի միասին են կազմում մարդուս ամբողջ գոյութիւնը: Մարմին առանց կենդանութեան և մտաց չեզոքական առարկա է: Կենդանութիւն, առանց մարմնո և մտաց, երևակալելի էակ է: Միտք, առանց կենդանութեան և մարմնո, չէ ինչ: Մարմին և կենդանութիւն, առանց մտաց, անբան կենդանի է: Կենդանութիւն և միտք առանց մարմնո, անիմանալի գոյութիւն է: Միտք և մարմին առանց կենդանութեան, չէ ինչ: Մարմին կենդանութեամբ և մտք հանդերձ — է մարդ բանական, հանճարո և առաքինութեան ընդունակ:

Դրանք երեքն ի միասին մի ամբողջութիւն են կազմում, բայց յուրաքանչյուրի հատկութիւնը երևում է, և յուրաքանչյուրը յուր հատկութեանը հարմար պահանջմունքներ ունի: Դոցա յուրաքանչյուրի հատկութիւնը ճանաչելու համար մենք կստենք, որ —

Այն հատկութիւնները, որոնց մասին կարելի է ասել, —

գործելություն, ճարպիկություն և թուլություն, դոքա մարդուս  
Ճարմնական հատկություններն են:

Այն հատկությունները, որոնց մասին կարելի է ասել.—  
առաքինություն կամ մոլություն,— դոքա մարդուս հոգե-  
կան հատկություններն են:

Այն հատկությունները, որոնց մասին կարելի է ասել,—  
խելոքություն կամ անխելոքություն,— դոքա մարդուս մտքի  
հատկություններն են:

Այս որոշումներից պարզ երևում է, որ մարդուս երեք  
կողմերից յուրաքանչյուրն ունի ստոր և վսեմ հատկություն,  
ինչպես ուժեղություն, թուլություն, առաքինություն, մո-  
լություն, խելոքություն, հիմարություն:

Դաստիարակության միակ նպատակը պիտի լինի զար-  
գացնել մարդուս այդ երեք կողմն ի միասին, որպեսզի նա  
լինի ուժեղ, խելոք և առաքինի: Ոչ մի մարդուս դաստիարա-  
կության կերպ պիտի չընդի այս բնական ճանապարհից մի-  
ձիայն նորա համար, թե այս կամ այն կողմը պիտի ստա-  
նա, վասն զի մարդս նախ և առաջ մարդ է, և ապա Կիրա-  
կոս, կամ Մարկոս<sup>1</sup>: Եվ տեսեք, ինչպե՞ս քաղցր են հնչում  
ձեր ականջումն այս բառերը,— ուժեղ, խելոք և առաքինի:

Իր բանը ընտրության է ընկնում, կարծես մի ներքին  
պատերազմ է բացվում հոգվո, մարմնո և մտաց մեջ, և ա-

---

<sup>1</sup> Մենք այսօրվան օրս կրոնական ազգ լինելով, կարող չենք ասել,  
թ մեր ժողովրդին գիտություն սխտք չէ, եթե ժողովրդին պետք է  
գիտություն, որքան առավել պետք է նա ժողովրդի առաջնորդներին,  
աբանց ձեռքումն է նորա հոգու և մարմնի ձգտողության ղեկը: Որպեսզի  
ձեքա լինեն հմուտ իրենց գործին և նավորդներին ծովածուփ կենցա-  
շույս ալիքներին շմատենն, հարկավոր է նոցա գիտություն հանգա-  
ժանքների և պատճառների— թե քաղաքական լինելին նոքա և թե քնա-  
կան, թե հոգեկան և թե մարմնական:

Մարդուս միտքը զարգանում է տարեց-տարի և դարեց-դար-  
կեցրումը նա կրոնի միայն արտաքին ձևերն ու արարողությունն է  
շնդունում և հավատում անգիտակցաբար, երկյուղից կամ սովորու-  
թյունից թելադրված, առանց զգալու երկնային տիրոջ կենսատու և  
անմահացուցիչ սերը, բայց հետո, երբ վրա է դալիս նորա մտքի զար-  
գացման երկմտողական (սքեպտիքական) շրջանը, նա այդ ժամանակ  
ազում է նախ համոզվիլ և ապա հավատալ: Ահա այդ միջոցին կրոնու-  
թույցը պետք է ունենա մի զարգացած միտք, որ կարողանա յուր աշա-

մեն մինը գորավոր փաստերով ապացուցում է յուր կատարյալ լինելու կարևորության իրավունքը և շնն ուզում, որ իրանց առ միմյանս ունեցած բնական, սերտ կապակցությունը իմաստակի ձեռքը խախտի:

Ուրեմն մարդուս երեք կողմն ի միասին պիտի լինի զարգացած, որ նա լինի կատարյալ մարդ: Եթե այդպես է ապա եկեք տեսնենք՝ ինչ միջոցով կարող ենք հասնել այն պատակին: Նախ խոսինք յուրաքանչյուր կողմի զարգացնելու դյուրին և բնական կերպի վերս և ապա մի էլեկտրական շղթայով այդ երեք ներգործությունը մի տեղ բերելով ուղղենք դեպի կյանքը: Բայց այս անելուց առաջ ես հարկավոր եմ համարում նախ և առաջ դժագրել մի միակողմանի կրթված մարդու պատկեր, այդ հասնգամանքի վատությունը և վնասակարությունն ակններև կացնելու համար. և վերցնենք միտքը, ըստ որում դա ավելի զրավում և հափշտակում մարդոց:

Մի մարդ անուշադիր եղավ յուր բնավորության և մարմնո զարգացման վերա, կարծելով, թե միակ փիլիսոփա դառնալով՝ ամեն կողմով կատարյալ կլինի, ուստի սկսավ յուր միտքը միայն մշակել, մինչև շինեց նորան մի հարուստ շտեմարան տեսական գիտությունց: Բռնելով մարդկություն մտքի զարգացման թելի սկզբից, հասավ մինչև յուր օրերը:

կերտաց կամ յուր ժողովրդյան մտքի և հոգվո մեջ հաշտություն և հավասարակշռություն պահպանելու Բայց եթե կրոնուսույցը կամ բարեգիշը հերքում է գիտության աշկարա և շոշափելի ճշմարտությունքը. շիմանալով նորա և այրուբենը, այդպիսիները կրոնի անհուն բարձրությունը կարի ստորացնում են և նորա հետ ի միասին կորցնում իրանց պատիվն ու հարգանքը թե աշակերտաց և թե ժողովրդոց առջև, վասն զի այդ միևնույնն է ասել. թե որովհետև մենք մի անմահ հոգի ունենք, էլ ինչ պետք է մեզ մարմին, հարկավոր է դորան սրախողիող և խեղդամահ անել... Ի՞նչ է պատճառը, որ մեր դպրոցների աշակերտք սաստիկ թույլ են լինում կրոնական և բարոյական զգացմանց մեջ և գործով էլ ապացուցանում են իրենց տկարությունը, մի առանձին հակակրոնություն ցույց տալով դեպի կրոնը և նորա ուսուցիչը: Փորձը ջուլը է տալիս, որ այն աշակերտները, որոնք ամենևին շնն ուսել կրոն, ավելի բարոյական և կրոնասեր են, քան թե նոքա, որոնք ենթարկվել են տգե կրոնուսույցի ճոռոմարանության. բայց մի՞թե այսպես կլիներ, եթե կրոնուսույցը մի բարեկիրթ և գիտնական անձն լիներ:

նորա միտքը զանազան կարծիքների ազդեցութեամբ կերպ-  
կերպ փոփոխմունք ստանալով և տարածամ հոգնելով կանգ  
առավ մի կետի վերա: Իբրև խելացի և ուսման ճաշակն առած  
մարդ, սկսավ հաշիվ տալ ինքն իրեն, թե ինչ է ինքը: Ինչ-  
պես մի հիվանդ մարդ զգա յուր տկարութունը, բայց  
բժշկվելու չափ կենդանական զորութուն չունենա յուր մեջը,  
նույնը պատահեցավ և մեր միակողմանի զարգացած գիտ-  
նականին: Նա տեսավ, որ թեպես շատ բաներ է ձեռք բերել  
արտաքուստ, բայց և շատ բաներից է զրկվել ի ներքուստ,  
որոնք եթե մնացած լինեին, ավելի մեծ օգուտ կբերեին յուր  
անձին, քան թե յուր ձեռք բերածները, որոնք առանց նո-  
ցա ոչինչ են: Ամոթ, Լրկյուղ, զարմանք, ուրախութուն, հո-  
գեկան գմայլմունք, տրտմութուն, սեր, հավատ, խիղճ, երե-  
վակայութուն, աշխույժ, եռանդ և այլ այսպիսի շատ բաներ  
անհետացան նորա բնութիւնից և ոմանց միայն շնչին նշա-  
նը մնացին: Նա գործունյա էր յուր անձը բնազդողարար  
պահպանելու չափ: Նորա մարմնո գծագիրը տեսնելու բան  
չէր: Աչքերը խոր էին ընկել, ծնոտը սրվել, մազերը թափվել,  
ստամոքսը խանգարվել, թոքերը մաշվել, ջղերը չորցել,  
մեջքից կեռացել և վերջապես դարձել մի գիտնական կմախք:  
Այս մտրդը, որ պիտի հանճար դառնար, տգիտացավ, մո-  
լիացավ և նվազեցավ: Վասն զի քանի՞-քանի՞ գիտնալու բա-  
ներ կան, որոնց մեր միտքը կարող չէ հասնել առանց օգնու-  
թյան մարմնո ուժի և հոգվո վառ երեակայության և ընդ-  
հակադարձն:

## Բ

Մենք ասացինք, որ դաստիարակութեան նպատակն է  
մարդուս առնել ուժեղ, խելոք և առաքինի: Գուցե ասողներ  
լինեն մեզ, որ եթե դաստիարակութեամբ կարելի է մարդուն  
այդ դովանի հատկութունքը տալ, էլ ի՞նչ ասել է ընական  
ձիրք, կամ «ժառանգականապես անցումն որակութեան ծնո-  
ղաց առ որդիս»: Մենք շնք հերքում ամենևին, որ ծնողաց  
հատկութունքը անցնում են իրենց քավակացը, բայց այդ չէ՛

ցույց տալիս, որ եթե ծնողքը ուժեղ են, նոցա զավակներն ևս անշուշտ ուժեղ կլինին. եթե խելոք՝ խելոք, եթե առաքինի՝ առաքինի: Վասն զի աշխարհս մի երկրորդական արգանդ է, որից մարդս հարկադրված է կրկին ծնանելու, յուր անվան վերա մի այլ անուն կամ կոչում ավելացնելու: Ծնողք աշխարհին են տալիս մի էակ, համարենք ուժեղ, առաքինի և խելոք լինելու ընդունակ, և ոչ իսկապես կատարելապես խելոք, ուժեղ և առաքինի: Այս վերջին գործն էակի կյանքի վերա ազդեցություն ունեցող հանգամանքներք պաշտոնն է: Ծնողաց որակությունը իբրև մի սերմ մի հողից ընկնում է մի այլ հող (այսինքն մի մարմնից մի այլ մարմին). եթե այս վերջին հողը շունենա այն բոլոր սննդարաջ նյութերը, որոնք եղել են առաջվան հողի մեջ, նա կոչնչանա, չի աճիլ, չի բեղմնավորվիլ: Ինչպես նաև ծնողք տգեա, մոլի և անզոր լինելով, այդ միևնույն հատկությանց տրամադիր են անում յուրյանց զավակին, բայց նա կարող է չենթարկվիլ այդ հատկությանցը, եթե ազատ մնար այն հանգամանքներից, որոնք անցնում և երևցնում են այս հատկությունքը: Ասել է թե, ոչ միայն առանց կանոնավոր դաստիարակության (կամ ինքնակրթության) մարդս կարու, չէ յուր ծնողական բարի հատկությունքը ստղաբեր կացուցանել յուր մեջ, այլ նաև կանոնավոր դաստիարակությամբ կարելի է երեսայի ստոր տրամադրությունքը, որ ստացել է յուր ծնողացմե ժառանգականապես, ճնշել անհետացնելու չափ և նորա բնությունը վսեմ հատկությունք բեղմնավորելու ընդունակ կացուցանել: Իսկ որ ինչ կվերաբերի «ձիրք» ասած բանին, որ իբր թե առանց ուսման և վարժողության շնորհք է տրվում մարդուս ձրիապես, դորա սուտ և ճշմարիտ լինելը կերևի հաջորդ հոգվածիս մեջ: Այժմ խոսինք մարմնո և նորա զարգացման մասին:

Հայտնի է, որ մարմինը մի ինքնաբույս քան չէ, այն առաջ է դալիս սերմից: Ոչ մի սերմ չկա, որ աճե առանց սնունդի: Ինչպես որ բույսի աճելու համար հարկավոր է հող, ջուր, օդ, լույս և այլն, նույնպես և մարմնո աճելու համար հարկավոր է կերակուր և օդ: Եվ այդ իսկ պատճառով մարմնո հատկությունն ըստ արտաքնության և ըստ ներքնության կա-

խում ունի կերակուրի և օդի հատկութիւնից: Ուրիշ անգամ, երբ կխոսինք առողջապահութեան վերա, տեղիք կունենանք մանրամասն ցույց տալու այդ սննդարար տարերքներէ որոշիտութիւնը և որպիսի ազդեցութիւն ունենալը, բայց առայժմ բավ է, եթե հաստատապես իմացիլի, որ մեր մարմինը ոչ այլ ինչ է, բայց միայն այն կերակուրը, որ մենք ուսում, բժում կամ խմում ենք և այն օդը, որով մենք շունչ ենք առնում: Այդ երկուսի ընդհատուիլուն պես, կրնգհատվի և մեր մարմնի աճումը, նորա շարժողութիւնը, կյանքը— մենք գմեննինք: Մարմնո ուժը կախում ունի գլխավորապես մկանունքների զարգացումից, ամրութիւնից, իսկ դոցա զարգանալը և ամրանալը կախում ունի մարմնամարդութիւնից և Ֆիզիկական աշխատութիւնից:

Քանի որ աշխարհիս երեսին ոչ ուսումնարան կար և ոչ ուսում կամ գիր, այդ ժամանակ մարդկանց դաստիարակութիւնը կայացած էր միակ մարմնավարժութեան մեջ: Գրավարժութիւնը ներս մտնելէն զկնի ևս մարմնավարժութիւնը չընդհատվեցավ հին ազգերի մեջ, մինչև քրիստոնէութեան տարածվիլը և կոապաշտական սովորութեանց հալածվիլը<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Մարմնավարժական դաստիարակութիւնը ամեն հին ազգաց մեջ առաջին և ամենակարևոր դաստիարակութիւնն էր. վազք, լող, ըմբշամարտութիւն, նետաձգութիւն, ձիարշավ, կառարշավ և որևիցե մարդկային ուժ զորացնելու և մարմինը ամրացնելու վարժութիւնը առհասարակ իշխանազանց կրթութիւնն էր: Քրիստոնէական ժամանակը այս մարմնավարժական դաստիարակութիւնը մոռացվեցավ: Ներկա դարուս սկզբից եվրոպացիք սկսան գործածել Անգղիո, Գաղղիո և Էբրմանիո երևելի դաստիարակախոսաց հորդորմամբ: Նախ Անգղիայումը և Գերմանիայումը սովորութիւն լինելով, Գաղղիա անց կացավ և այնչափ կատարելագործվեցավ, որ մասնավոր կրթարաններ հաստատվեցան, որոնց մեջ հաշմանդամ և անդամալուծ անձինք սկսան բժշկվիլ շոյ կրթութեամբ. երաժշտութիւնը ևս իրանց շարժվածքի միջոց անելով, վերջապես թե պատանեկաց և թե աղջկանց վարժարանաց և վարժատանց մեջ ընդունելով հաստատվեցավ այս մարմնավարժութիւնը... Իրանի՛ կլիներ, որ մարմնավարժական դաստիարակութիւնը մեր Հայոց աշխարհին որդոց մեջ ևս մտներ, որում շատ հարկավորութիւն ունինք ոչ թե եվրոպացոց հետեւելով, այլ մեր նախնայաց դաստիարակութեան ամենամեծ առարկան լինելուն համար: Դյուցազն Վահագնի վիշապներու հետ կովելը, Ա. Արշակա նիզակով կրթողներ ծակելը, Հայկազան

Սպարտացիք իրանց քաղաքի շորս կողմով պարիսպ չէին քաշում թշնամուց ասպահով մնալու համար, վախենալով, թե միգուցե այդ հանգամանքը ժողովրդի ուժն ու քաջութիւնը նվազեցնեն, այլ աշխատում էին ի ձեռն մարմնավարժութեան իրանց անձը պատրաստել վահան ամրութեան, որով կարասցեն զամենայն նետս մուխս թշնամյացն շիջուցանել:

Որպեսզի մենք առանց ձանձրութեան կարողանայինք օգուտ քաղել այս կենսատու պարապմունքից, հարկավոր է աչքի առաջ ունենալ հետևյալ նկատողութիւնը:

Մարդս կարող չէ թաքցնել յուր մեջ այն, ինչ որ այլևս չէ թե ընդունակութիւն կամ տրամադրութիւն է, այլ շոշափակի մի բան է դառած: Ըմբիշները, որոնք սովորաբար ու-

---

Տորքա ըղունկներով քարեր փորելը, և Սյավ ծովին մեջ ահագին քարեր նետելով ալեկոծութիւն անելը, Մեծին Տրդատա երևելի նահատակութիւնները, Վարապատա նետաձողութիւնը, վազելը և ցատկելը, հզոր և արի Աշոտ Երկաթին հաստ երկաթյա գավազանի ծոկը, Հալսունի Ապլիարիպ զորապետին մի սրի հարվածով երկաթն զոներ կտորելը, Ա. Լեվոնի Ռուբեն որդիուն բաղանիթի մեջ չրով լիքը մարմարյա ավազանները իր սաստիկ զորութեամբ վեր վերցնելով Հունաց կայսեր առաջ դնելը և այլն: Սրանց նման հազար ու մեկ օրինակներ, որ մինչև մեր օրերն անգամ տեսնում ենք Հայոց աշխարհիս որդւոց մեջ, ցույց են տալիս մեր նախնաց մարմնավարժական դաստիարակութիւն ունենալը (սկզբունկ Հայոց աշխարհին, 1860 ամի, կրես 167):

Մեզ ոչինչ չէ մնում սորա վերա բան ավելցնել, բացի ափսոսալուց, որ այս իոսքերը ահա իննը տարի է, որ ասվել են, բայց սոցա կատարման նշանը ոչ մի տեղ մեր Հայոց աշխարհին որդոց մեջ չի երևում. իսկ եթե որ մեր դուցազանց քաջագործութիւնը առասպելաբանութիւն կհամարեի, թող իմանա, որ մարմնավարժութեամբ մարդիկ այնչափ շատ ուժ են ձեռք բերում, որ քաղաքի քաղաք թափառելով ցույց են տալիս իրենց շնորհքը ոչ սակավ զնով: Սրեանն-քառասուն փութ բան բարձրացնելը, տաս փութանոց բան մի քանի տասնավոր քայլ նետելը շատ հեշտ և դուրին բաներ են նոցա համար: Իսկ որ ինչ կվերաբերի ճարտիկութեան, այդ վարժութեանը մեջ այն աստիճան զարգանում են, որ վարժողութեան զորութիւնը շիմացողին աչքակապութիւն է համարվում և կախարհութիւն և չէ կարծում, որ այդ բանը ստուգապես այդպես կատարվելիս լինի: Ինչ է ֆոկուսիկների (ձեռնածու) զլխավոր գաղտնին, եթե ոչ ձեռաց զարմանալի արագաշարժութիւնը, որ այնչափ սաստիկ է, որ մեր աչքին չի երևում, թե երբ և ինչպես արավ: Իսկ մենք մեր տգիտութեամբ այդպիսիներին աչքակապ ենք համարում և ամենաշնչին լարախաղացի ճարտիկութիւնը ի վերուստ իջած մի առանձնաշնորհութիւն:



ժողով են լինում, նոքա միշտ որս են փնտրում իրանց ուժին ենթարկելու համար: Սոքա շատ անգամ բոլորովին աննպատակ ծառերի կամ քարերի հետ են կաշում: Կանխակալ կարծիքներից և կաշկանդող խավար նախապաշարմունքներից ու ծուռ հասկացողություններից ազատված մի միտք աշխատում է լուծել այնպիսի խնդիրներ, որ իր կարողությունից շատ բարձր է և եթե լուծեր էլ, նորան ոչ մի շահ չպիտի լիներ: Ծարպիկ լարախաղացը մի նույնքան ոգևորվում է յուր պարանի վերա, որքան ճարտարախոս հեռտորը յուր ամբիոնի վերա, դյուրազգաց բանաստեղծը յուր հերոսների նկարագրելումը և հանճարավոր բնագետը յուր ենթադրությանց ճշմարտությունը գտնելումը և ասպացուցանելումը: Սորանից պետք է հետևենք, որ ուրեմն եթե Երեխայի սկզբնական կրթության ժամանակից սկսած հետզհետե զարգացնենք նորա մարմնո ուժը այնքան, որ այդ նորա մեջ մի շոշափելի բան դառնա, այնուհետև որքան կուզե շատ լինի նորա մտավոր պարապմունքը, նա այնուամենայնիվ յուր սիրելուց չի կամենալ զրկվիլ բնականապես, մի բան, որ արդեն պահանջմունք է դառել և ստիպում է կատարումն, նորանից շուտ չի կարելի ազատվիլ, մանավանդ երբ իմացվի, որ այդ պահանջման կատարումը շատ պատվական և օգտավետ սովորություն է: Բայց մենք բոլորովին սրա հակառակն ենք անում: Մեր երեխայոց մահու պատժով արգելում ենք խաղալ, կաշել, վազվզել, որ շատ բնական են երեխայոց վառվռուն բնության և փոխանակ օգուտ քաղելու այս բնատուր ձգտողությունից և կանոնավորելու նորան, մենք խլում ենք երեխայի այս հատկությունը, նվաճում ենք նորա ուժը և այնուհետև առանց մեր ստիպելու էլ նա ինքն է ատում այդ խաղերը, և իբր խելքի գալով, սկսում է նկատել, որ խաղալը և ֆիզիկական աշխատությունը աղբատ և անկիրթ տղայոց գործ է. սկսում է մեծամտվիլ. մի տիրական բնավորություն ստանալ, մինչև այն աստիճան, որ յուր ձեռներն անգամ էլ չի ուզում լվանալ, յուր կոշիկները, շորերը սրբել, փողոցից մի աղուխ բան չէ տուն բերում, չորս ֆունտ բանի համար մշակ է բռնում... Այսպիսի պատանիք ինչի՞ կնմանին վերջը, եթե ժանավանդ ընկնին այնպիսի կլիմայի տակ, որ առավել ևս

նվաճեր նոցա մարմնո ուժը: Հայտնի բան է, նրանք կդառնային կնամարդիկ և կնմանեին այն գիտնականին, որ մենք նկարագրեցինք մեր նախընթաց հոգւածում: Եվ այս թերությունը նոցա շատ սակավ զգալի կլինի, վասն զի մի բան, թե լավ, թե վատ, որ սովորություն և պահանջմունք է դարձած մարդու բնությանը, այն է սիրելի, իսկ եթե ոչ, չէ սիրելի: Նոքա զրկվում են այնպիսի բանից, որ շեն ունեցելու բայց եթե ունեցած լինեին և կորցրած, այդ ժամանակ առավել կափսոսային:

Կասկած չկա, որ խելքով առավել լավ կապրի մարդս, քան թե անխելք: Բայց կարծել, որ խելքով ապրելը կնշանակե միմիայն խելքին զոռ տալ, բան գրել, բան ասել և այլն, բայց յուր կողմնները շարքել, յուր ձեռքին ջուր շածել, շիմանալ լող, ձիարշավ, ըմբշամարտություն, որսորդություն, մի որևիցե արհեստ և այդ բոլորը ծառայից և անխելք մարդկանց գործ համարել, այդ բոլորովին անխելքության եզրակացություն է: Խելքը չի որոշում այդ պահանջմունքների համար առանձին-առանձին փաստեր, այլ բոլոր մարդկանց համար առանց բացառության բնական է համարում նոցա իսկ բարեկամությանը համար կարգի և կանոնի տակ է ձգում այդ պահանջմունքները, և նոցա կատարելու դյուրին և անվնաս կերպն է սորվեցնում: Խելքը չէ ասում, որ մեզ ուտել պետք չէ, այլ ցույց է տալիս, թե ո՞ր կերակուրն ավելի սննդարար է և ո՞րը սակավ, ո՞րը օգտավետ և ո՞րը վնասակար, ո՞րը հարկավոր երեխային, և ո՞րը աշխատավորին, ո՞ր կլիմայում ինչ տեսակ կերակուրն ավելի առողջարար է և ո՞րը ընդհակառակն և այլն: Եթե այս ճշմարտությունը ընդունում ենք, գիտենք, որ առանց կերակուրի չենք ապրիլ, մեռածի հաշվում չենք միթե, երբ զուրկ ենք գլխապահության զխավոր զենքից, որ է մեր ուժը. ուժը, որ ամուսնության զխավոր պայմանն է, գործունեության միակ գործին է, մարդկային ստոր կիրքերը նվաճող միակ սանձն է, աշխարհային փորձանքներից միակ ազատիչն է, այրության և հերոսական միակ դրոշմն է..... Ո՞ր երևելի դուրսացան և «Մեծ» տիտղոսով պատված անձն կարող եք վերցնել, որ առանց ուժեղության կարողացած լինի հասնել այդ

պատվին և առանց մարմնամարզութեան կարողացած լինի հասնել ուժեղութեան: Մեծն Աղեքսանդր, Մեծն Փրիդրիկոս (Ֆրիդրիխ), Մեծն Նապոլեոն, Մեծն Պետրոս, և այլ շատ մեծ անձինք ինչո՞վ են կարողացել հասնել այդ պատվին և անմահութեանը, եթե ոչ իրենց ուժեղութեան շնորհքովը, որ սերտ կապակից է եղել նույն մեծահոգութեան և հանճարոհետ: Ի՞նչն էր ստիպում ռուսաց մեծ կայսրին Հոլանդիայում թյուր օրական հացը հայթայթել այն խորհրդով, որ առավել ձշտիվ կարողանա յուր նպատակին հասնել, այսինքն՝ լավ թովորել նավաշինութեան արհեստը: Իրավ է, վրեժխնդրութիւնը, նախանձը, պատվասիրութիւնը, ինչպես նաև հայտնասիրութիւնը, ազգասիրութիւնը և այլ այսպիսի վսեմ և ստոր կիրքերը երբեմն դրդում են մարդու մեծամեծ գործեր կատարել, սակայն այդ կիրքերը փոքրոգի և թույլ անձանց երբեք չեն հասցնում իրանց նպատակին, այլ ընդհակառակն նոցա անվան ստորացնելու ևս պատճառ են լինում: Ուստի, աշխատել երեխայի մեջ վառել հայրենասիրական և ազգասիրական զգացմունք և ուշ չդարձնել նորա ուժի վերա, այդպիսով նորանից կարելի է պատրաստել մի ցանցառ և թեթեւամիտ արարած, բայց ոչ երբեք քաջագործութեանց ընդունակ մի հերոս, ոչ երբեք առնող և ուսուցանող:

Եթե մեկը նախապատրաստված է լինել և՛ վարժապետ, և՛ երկրագործ, և՛ արհեստավոր, և՛ վաճառական, և՛ վարդապետ, և՛ բանասեր, և՛ զինվորական, և՛ մշակ, թող այս վերջին պաշտոնը լինի կատարելիս, դա այնուամենայնիվ չէ ծառա և ստրուկ, այլ այն պարոնն է ստրուկը, որ բացի մի պաշտոնից և այն շատ միակողմանի, ուրիշ գործ չի կարող կատարել: Այդպիսին կամա-ակամա պիտի կապվի, կաշկանդվի մի դրութեան մեջ և տանել հազար ու մեկ անպատվութիւն: Այդպիսիք պիտի սպասեն, թե երբ պիտի հասարակութեան մեջ բացվի այսինչ պաշտոնը և մինչև դրա բացվիլը պիտի թափառեն փողոց-փողոց: Այս օրվան օրս մեր վարժապետաց և քահանայից մեծ մասը այսպիսի անձինքներին են: Վա՛յ այն վարժապետին, որ ինքը թերագարգ լինելով, կարծում է, թե ուրիշներին կարող կլինի կատարելապես զարգացնելու: Վա՛յ այն հողաբարձուին, որ

կարծում է, թե մարդասիրութիւնն է այդպիսի մարդկանց վարժապետական պաշտոն տալը: Մասնավորի կյանքի ապահովութեանը ղոհել մի ամբողջ սերնդի բախտավորութիւնը և կյանքը, սարսափելի մոլորութիւնն է: Վա՛յ այն ժողովրդոցը, որոնք հոգևորական են շինում մի մարդու, նորա խեղճութեան վերա միայն ուշ դարձնելու և ճարահատութեանը: Ո՞վ կարե պախարակել մի բան, որ բարեսրտութիւնն է: Բայց մի՞թե բարեսրտութիւնն չի լինիլ, եթե յուրաքանչյուր գյուղում և քաղաքում մի-մի սեղանատուն բացվեին մարդոց ձրիապես կերակրելու նպատակով, բայց ի՞նչ շաբ բան կարող էր ավելի շար հետևանք ունենալ, քան թե այս բարի ձեռնարկութիւնը:

Այս հանգամանքը արդեն ինքնըստինքյան մատնացուց է լինում, որ յուրաքանչյուր դպրոցին կից պետք է լինի մի արհեստանոց: Եթե աղջկանց դաստիարակութեան մեջ ձեռագործութիւնն անհրաժեշտ, հարկավոր է համարվում, որքան առավել հարկավոր պիտի համարվի տղայոց մի որեւիցե արհեստ իմանալը: Եվ այս ոչ միայն տնտեսական և մարմնամարզական կետից նայելով մեծ օգտավետութիւն ունի, այլ նաև մտավոր և հոգեկան զարգացման մեծ օգնութիւն և դյուրութիւնն է տալիս, վասն զի մարդս միմիայն մտածելու չէ ընդունակ, այլ նաև երևակայելու և գործելու: Գործելը միմիայն գրել չէ, և կարողալը, որ մտածելու՝ հետ սերտ և անբաժան կապակցութիւնն ունին, այլ այնպիսի գործ, որ հանգստութիւնն է տալիս այլ դժբախտներին և ժամանակ է տալիս նոցա շունչ քաշելու և զորանալու: Արհեստները կարող են շատ հասարակներից լինել, ինչպես են կոշկակարութիւնը, իհարկե ավելի կատարելագործյալ ձեւով, դերձակութիւն, հյուսնութիւն, երկաթագործութիւն, կազմարարութիւն և այլ այսպիսիք: Մենք մեր դաստիարակութեան կերպը մեր ազգի վիճակին պիտի հարմարեցնենք, ի՞նչ հարկավորութիւն կա կուրորեն հետևիլ օտար ազգաց: Ո՞ր բանիմաց մարդը չի կարող նախազուշակել, որ եթե մեր դպրոցների ընթացքը այսպես առաջ երթա, ինչպես այժմ, մեր մեջ կշատանա հետզհետե ձրիապես լավ ուտել և լավ հագնվիլ սիրողների թիվը, և մենք ազգօգուտ անդամ-

Ների տեղ կստանանք դատարկաշրջիկ և դատարկապորտ անձինք: Թող ոչ ոք միակողմանի շմեկնեմեր այս ակնարկութիւնը և գայթակղի, այլ խոստովանի, թե ճշմարիտ է, որ մեր մեջ այսօրվան օրս անգամ շատացել են արդեն այնպիսի պատանիք, որոնք ըստ երևույթին ուսումնածարավ են, բայց իսկապես ծուլ, անդուր և ապրելու հեշտ ձանապարհ փնտրող անձինք: Մեր նախնիք իրանց աննշան ուսումով մեծամեծ հարստութիւններ էին դիպում, բայց մենք այժմ պատրաստում ենք այնպիսի անձինք, որոնք վատնելու առավել ընդունակ են, քան թե շահելու իրանց հայրական ժառանգութիւնը: Պետք է երևակայել, որ ծխական դպրոցի պատրաստական դասարանից մինչև համալսարանի շորրորդ և հինգերորդ կուրսը մի այնպիսի ժամանակամիջոց է, որ պարունակում է յուր մեջ միջին թվով քսան տարի, իսկ քսան տարվա ծախքը անում է շատ սակավից տաս հազար մանեթ: Հարկավոր է այս բոլորը աչքի առջև ունենալ և մեր զավակներին նախապատրաստել այնպես, որ կարողանան առանց հոգնելու, առանց մեծամեծ կորստի, այնքան բան ձեռք բերել, որ կարողանան նորանից ազգին էլ մասն հանել. իսկ միակ մի գլուխ ապահովեցնելու նպատակով բառասուն տարվան հասցնել յուր կրթութեան շրջանը՝ այդ մի սարսափելի մոլորութիւն է:

## ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ ՄՏՔԻ ՄԱՍԻՆ

### Ա.

Մարդու հանձարը յուր սկզբնական գյուտերի հետ միասին հնարել է և գիր: Այդ գիրը երկու առավել մեծ պաշտոն է կատարում մարդկային մտավոր զարգացման ասպարիզումը— անցելուց հաշիվ է ստանում և ապագային հաշիվ տալիս: Եթե փորձերն են, որ սնունդ են դառնում մեր մտքի զարգացման համար, և գիրն է, որ մեր նախորդների փորձերը կենդանագրելով տալիս է մեզ, ապա ուրեմն առանց գրի մենք կարողանալու չէինք մեր նախնյաց մտա-